

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՈՂՈՒՄԻ ՍՏԵՂՄՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած երկու հեղափոխությունների և պատերազմից Ռուսաստանի դուրս գալու հետևանքով, արևմտյան և կովկասյան ռազմաճակատներում տեղի էին ունենում զորամասերի կազմալուծման և իրենց զբաղեցրած բնագծերից հեռացման գործընթացներ: Կովկասյան ճակատում այդ ծանր ու հիվանդագին գործընթացը ավարտվում է 1917 թ. վերջին:

Ձգտելով գտնել նոր ուժեր, որոնք ընդունակ էին փոխարինելու կովկասյան ճակատը լքող ռուս զինվորներին, հայ քաղաքական շրջանների ճնշման տակ Անդրկովկասի զինվորական և քաղաքացիական իշխանությունները ռուսական զերազույն հրամանատարության նախաձեռնությամբ ձեռնամուխ են լինում հայկական զորամասերի ստեղծմանը: Քաղաքական բարդ ու խճճված իրադրության պայմաններում թուրքական ներխուժման դեմ պայքարելու նըպատակով 1917 թ. վերջին սկսվեց ձևավորվել հայկական բանակային կորպուսը (կոչվել է նաև հայկական առանձին բանակային կորպուս):

Ճիշտ է, շեք կարող ասել, թե հայկական բանակային կորպուսի ստեղծման պատմությունը շրջանցվել է մեր պատմագրության կողմից, ինչպես որ շրջանցվել են նախախորհրդային պատմության շատ հարցեր, բայց պորբեմին առնչվող մի շարք կողմեր, մեր կարծիքով, դեռևս լրացուցիչ լուսարանությունների կարիք են զգում:

Ինչպես հայտնի է, արևելահայությունը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել առաջին համաշխարհային պատերազմին: Պատերազմի ընթացքում ռուսական բանակի շարքերն էր զորակոչվել ավելի քան 200 հազար հայ մարտիկ¹, որի զգալի մասը սակայն գտնվում էր արևմտյան ռազմաճակատներում:

Ռուսաստանի դեմ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո (1914 թ. հոկտեմբերի 20) Արևմտյան Հայաստանը ռուսական զենքի օգնությամբ ազատագրելու հույսեր կապած հայկական ազգային-քաղաքական շրջանները (մասնավորապես Թիֆլիսի Հայոց սոցալին բյուրոն) դիմեցին ռուսական բանակի գլխավոր հրամանատարությանը՝ խնդրելով թույլատրել կազմավորելու հայ կամավորական շոկատներ, որոնք պետք է աշակցեին ռուսական Կով-

¹ Տե՛ս «Армянский вопрос», Ереван, 1991, էջ 295, А. Н. Мвацаканян, Военный талант народа (о потерях армянских военных кадров в 1890—1920 г. г.),—«Литературная Армения», 1970, № 2, էջ 86: Սակայն ըստ զենքավ Գ. Ղորղանյանի, անաշիճ աշխարհամարտի տարիներից ռուսական բանակում ծառայող հայերի թիվը հաշվվում էր մոտ 250 հազար: Տե՛ս «La participation des Arméniens á la Guerre Mondiale sur le Front du Caucase (1914—1918)», Paris, 1927, p. 9.

Կառայան բանակին՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում: Սկզբնապես ռուսական զբոսաշրջային հրամանատարությունների կողմից թուլյալույթից ստեղծել միայն շորս հայկական խմբեր (դրուժինաներ)՝ յուրաքանչյուրը մեկ կահոնավոր գումարտակի կազմով: Առաջին խումբը (հրամանատար՝ Անդրանիկ) կազմավորվեց Պարսկաստանում՝ Իլիմանի շրջանում, երկրորդը (հրամանատար՝ Դրո)՝ Իզդիրում, երրորդը (հրամանատար՝ Համազասպ)՝ Երևանում, իսկ չորրորդը (հրամանատար՝ Քեռի)՝ Կարսում: 1915 թ. սկզբին կազմավորվեցին ևս երեք խմբեր, հինգերորդը (հրամանատար՝ Վարդան), վեցերորդը (հրամանատար՝ Ա. Զանփոլաղյան) և յոթերորդը (հրամանատար՝ Իշխան Արզուսյան): Այսպիսով, կազմակերպվեցին յոթ հայկական խմբեր, և արդեն 1915 թ. վերջին այդ խմբերում հաշվվում էր ավելի քան 6 հազար մարդ²: Կամավորական խմբերը բացառիկ խիզախություն ու ռազմական հմտություն դրսևավորեցին պատերազմի առաջին շրջանում՝ մեծապես նպաստելով Արևմտյան Հայաստանի ազատագրման գործին: Բայց 1915 թ. վերջից, երբ ռուսական հրամանատարությունը ուժեղացրեց Կովկասյան բանակը և անցավ վճռական գործողությունների, այլևս հայ կամավորների «կարիքը» չէր զգացվում, և 1915 թ. դեկտեմբերին հրաման արձակվեց հայ կամավորական խմբերի կազմաքրման մասին: Նրանց փոխարեն կովկասյան ճակատում 1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. օգոստոսն քնկած ժամանակահատվածում ռուսական կանոնավոր զորամասերի կազմում ստեղծվեցին վեց հայկական հրաձգային գումարտակներ՝ հայ սպաների հրամանատարությամբ³:

Կամավորական խմբերի կազմաքրումից հետո հայ կամավորների մի մասը (3176 մարդ), նման որոշումից հիասթափված, ընդհանրապես թողեց զինվորական ծառայությունը, իսկ մյուս մասը (2000 մարդ)՝ համալրեց հայկական գումարտակները⁴: Ռազմազաշտում գոհվել էին շուրջ 800 հայ կամավորների⁵:

Հայկական հրաձգային գումարտակները նույնպես ակտիվ մասնակցություն ունեցան կովկասյան ճակատի ռուսական բանակի ռազմական գործողություններին: Նրանք հատկապես աչքի ընկան Երզնկայի գրավման, ինչպես նաև հյուսիսային Իրանում և Իրանական Քրդստանում տեղի ունեցած մարտական գործողություններում⁶: 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ հայկական վեց հրաձգային գումարտակներում ծառայում էր 5719 մարդ, որից 174-ը՝ սպա⁷: Այդ նույն ժամանակահատվածում (1917 թ. մայիսի դրությամբ) ռուսական բանակի կովկասյան ճակատում կար 40—50 հազար հայ զինվոր ու սպա, իսկ 30—40 հազարը գտնվում էին ռազմական այլ տեղամասերում⁸:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը հանդեցրեց ռուսական բանա-

² Տե՛ս Գ. Ղորղանյան, նշվ. աշխ., (Ֆրանսերեն), էջ 12:

³ Հայկական գումարտակների հրամանատարներ ճշանակվեցին հետևյալ սպաները. առաջինում՝ գեղապետ Պ. Բեժանքեկյան, երկրորդում՝ գեղ. Մ. Սիլիկյան, երրորդում՝ գեղ. Տեր-Նիկողոսյան, չորրորդում՝ գեղ. Հովսեփյանց, հինգերորդում՝ գեղ. Պ. Փիրույան, վեցերորդում՝ գեղ. Մելիք-Մուրադյան: Տե՛ս Ա. Շեներ. Սարդարապատի հերոսամարտը, Փրեզնո, 1967, էջ 9: Ե. В. Масловский, Мировая война на Кавказском фронте 1914—1917 гг., Париж, 1933, էջ 488, 490, 495:

⁴ Տե՛ս «Համառոտ տեղեկագիր Հայոց ազգային բյուրոյի գործունեության 1915—1917 թթ.», թիվ 7, Փիֆլիս, էջ 89:

⁵ Տե՛ս «Հորիզոն», 4 հունվարի 1917 թ., թիվ 3:

⁶ Տե՛ս «Ռարավոր ճիգեր հայ անկախության», Պուրեշ, թիվ 8, էջ 24:

⁷ Տե՛ս Ա. Նազարյան, Կովկասյան բանակի սոցիալական և ազգային կազմը 1914—1917 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի, Երևան», 1989, թիվ 3, էջ 150:

⁸ Տե՛ս Մ. Աֆանեսյան, Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս, 1918 թ.), Երևան, 1991, էջ 21:

կի կազմալուծմանը և զբաղեցրած բնագծերից հետքաշմանը: Որպեսզի նահանջող ուսուսական զորքերին սրևէ փոխարինող ուժ ստեղծվեր կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը և Անդրկովկասի քաղաքացիական իշխանությունները սկսեցին իրախուսել ազգային, այդ թվում նաև հայկական զորամասերի ստեղծումը: 1917 թվականի մայիսին նրանք բազմիցս դիմեցին ուսուսական բանակի գերագույն հրամանատարությանը (ստավկա)՝ թույլատրելու կովկասյան ճակատում գործող հայկական վեց դումարտակների հիման վրա կազմավորելու հայկական բրիգադ⁹: 1917 թ. ամռանը ժամանակավոր կառավարության ստղծական նախարար Ա. Ֆ. Կերենսկուն ուղղված զեկուցագրում ՕԶԱյՈՄ-ի ղեկավար Վ. Խառլամովը նկարագրելով կարգապահության անկման և դասակարգության հետևանքով կովկասյան ճակատում նկատվող ուսուսական զորքերի մարտունակության թուլացումը, նշում է, որ ի տարբերություն մեծ հարշույտը յբայում չի առաջացրել հայկական դումարտակների շարքերում, որ դրանք ուժեղ են գաղափարական համախմբվածությամբ և հեղափոխական նպատակների պարզ գիտակցությամբ¹⁰: Այնուհետև զեկուցագրի հեղինակը նշում է նաև այն նպաստավոր վիճակի մասին, որ հայկական զորամասերի համալրումը կատարվելու է մյուս զորամասերում ծառայող հայ զինվորների և սպանների հավաքագրման միջոցով, այսինքն այդ մարտիկները և սպանները իրենց ծառայության տեղն էին մեկնելու արդեն իսկ հանդերձավորված¹¹: Զեկուցագիրը ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Նկատի ունենալով այս բոլորը, ինչպես նաև անձնական բանակցությունների ժամանակ ծանոթանալով հայ զինվորների ու սպանների տրամադրություններին, մենք սահմանափակ ենք համարում մեր կողմից եռանդուն կիրպով պաշտպանել միջնորդությունը և խնդրել Ձեզ՝ այդ հարցը որոշել զրական իմաստով¹²: Հայկական ազգային զորամիավորումների ստեղծմանը կարևոր նշանակություն էին տալիս ու մասնակցություն հանդես բերում նաև Անդրկովկասի և Ռուսաստանի հայ քաղաքական շրջանները: Նախազգայով, որ կովկասյան ճակատը շուտով կմերկանա և հայ ազգաբնակչությունը անպաշտպան կմնա թուրքերի դեմ հանդիման ուսուսական զորքերի կողմից մինչ այդ պրավիած շրջաններում, նրանք դիմեցին ժամանակավոր կառավարությանը՝ թույլատրել արևմտյան ռազմաճակատներից հայ մարտիկներին փոխադրելու Անդրկովկաս՝ այնտեղ հայկական զորամասեր կազմավորելու նպատակով¹³:

Գրեթե միաժամանակ նույնպիսի նախաձեռնություններով հանդես եկան նաև ուսուսական բանակի որոշ բարձրաստիճան հայ զորավարներ, որոնք համագործակցելով Ռուսաստանի հայկական կազմակերպությունների հետ՝ 1917 թ. մայիսին Պետրոգրադում ստեղծեցին, այսպես կոչված, զինվորական կոմիտեի¹⁴: Այն պե՛րք է ձեռք բերեր արևմտյան ճակատների հայ զինվորներից հայկական զորամիավորումներ ստեղծելու և նրանց կովկասյան ռազմաճակատ փոխադրելու ժամանակավոր կառավարության թույլտվությունը¹⁵: Զինվորական կոմիտեի նախաձեռնությունը պաշտպանելու, ինչպես նաև ժամանակավոր կառավարության ստղծական նախարար Ա. Ֆ. Կերենսկու հետ

⁹ Տե՛ս Ա. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կոմիտեի, Երևան, 1984, էջ 69—70:

¹⁰ Տե՛ս Այսին տեղը, էջ 70—71:

¹¹ Տե՛ս Այսին տեղը, էջ 71:

¹² Նույն տեղում:

¹³ Տե՛ս Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 61:

¹⁴ Զինվորական կոմիտեի կազմի մեջ մտնում էին գեներալներ Բագրատունցի (կոմիտեի նախագահ), Տիգրանյանը, գնդապետ Մելիք-Փարսադանյանը և Լևոնյանը:

¹⁵ Տե՛ս Ա. Աֆանասյան, Ազգ. աշխ., էջ 18:

բանակցելու համար Պետրոգրադ ժամանեցին նաև Անդրկովկասի հայ քաղաքական շրջանների ներկայացուցիչները՝ Արևմտյան Հայաստանի քաղաքացիական վարչության պետի տեղակալ գոկտոր Հ. Զավրիևի պլեմբուրգյան Մալխի 31-ին նրանք իրենց խնդրանքը հանձնեցին Ա. Ֆ. Կերենսկուն և ստացան նրա հավանությունը: Սակայն: Զինվորական կոմիտեի նախաձեռնության իրագործմանը խանգարեց Անդրկովկասի կառավարող շրջանների դիրքորոշումը, որոնք սովյալ պահին հանդես էին գալիս այդ կոմիտեի լուծարման և կովկասյան բանակի հայ մարտիկներից վեց հայկական գնդերի կազմակերպման օգտին¹⁶: Դա մեծապես խանգարեց հայ քաղաքական շրջաններին՝ օգտագործելու ստեղծված հնարավորությունը հայ մարտիկներին արևմտյան ճակատներից կազմակերպված ձևով տեղափոխելու և Անդրկովկասում լիարժեք հայկական զորամիավորումներ ստեղծելու:

Բոլոր միջնորդագրությունների և բանակցությունների արդյունքը եղավ այն, որ 1917 թ. սեպտեմբերի 13-ին ուսական գերագույն հրամանատարությունը թույլատրեց, կովկասյան ճակատում գործող վեց հայկական գումարտակները վերակազմավորելու և նրանց հիման վրա Անդրկովկասում հայկական հրաձգային բրիգադ ստեղծելու, որը պետք է բաղկացած լիներ հրաձգային վեց գնդերից՝ յուրաքանչյուրում երկու գումարտակով¹⁷: Կարճ ժամանակահատվածում գերագույն հրամանատարությունը կարգադրությունը կատարվեց, և հոկտեմբերին հայկական բրիգադը արդեն կազմավորված էր: Այդ բրիգադի հրամանատար նշանակվեց գնդապետ Քեծանբեկյանը, իսկ շտաբի (սպայակույտ) պետ՝ կապիտան Վոպրիլինը¹⁸:

Ունենալով հայկական բրիգադ և մի շարք այլ առանձին ստորաբաժանումներ, արդեն կարելի էր մտածել նաև հայկական բանակային կորպուս կազմակերպելու մասին, ինչին և ձեռնամուխ եղան Անդրկովկասի հայ քաղաքական շրջանները, որոնք հանդիսանում էին առավել շահագրգիռ կողմ՝ մեծ զոհողությունների գնով ազատագրված Արևմտյան Հայաստանը պաշտպանելու համար: Հայ ժողովրդի համար ստեղծված այդ ճգնաժամային պայմաններում Հայոց ազգային խորհուրդը, հիմնով ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունից, 1917 թ. հոկտեմբերին կրկին դիմեց ժամանակավոր կառավարությանը (մասնավորապես նրա ռազմական նախարար Ա. Ֆ. Կերենսկուն)՝ թույլատրելու Անդրկովկասում հայկական բանակային կորպուսի կազմավորումը: Այդ նայատակով հոկտեմբերի վերջին և նոյեմբերի սկզբին Թիֆլիսի և Հայոց ազգային խորհրդի կողմից Պետրոգրադ էին գործուղվել նաև Ա. Խատիսյանը և Հ. Զավրիևը¹⁹: Հետագայում, ինչպես նշում է իր հուշերում հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թ. Հ. Նազարբեկյանը, Անդրկովկասում ազգային կորպուսներ կազմավորելու մասին Պետրոգրադից հրամանի ստացման պահին առավել արտոնյալ վիճակի մեջ էին հայերը, որոնք այդ ժամանակ արդեն ունեին կազմավորված վեց հրաձգային և մեկ հեծելազորային գնդեր²⁰: Փանի որ 1917 թ.

¹⁶ Տե՛ս նույն տեղը:

¹⁷ Հայկական բրիգադի և ապա կորպուսի կազմավորման գործընթացի ձևավորված գործառնակի, Գրանց տեղաբաշխման վերաբերյալ սովյալները բերված են Քիմանկանով Քաղկական քանակային կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանի հուշերից («Воспоминания генерала Ф. И. Назарбекова об армянском отдельном корпусе со дня его формирования до сдачи Эрзурума и его расформирования»), որոնք գտնվում են ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, ինչպես նաև այլ փաստաթղթերից:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 15:

¹⁹ Տե՛ս Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը Պետրոպ, 1988, էջ 7:

²⁰ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 1:

վերջին ռազմաճակատի փլուզումը ընդունել էր արատավոր բնույթ, և ստեղծված դրուժյունը կարող էին որոշ չափով մեղմացնել միայն ազգային զորամասերը, ժամանակավոր կառավարությունը ոչինչ չէր մնում անել, քան բավարարել Հայոց ազգային խորհրդի խնդրանքը:

Անդրկովկասում պետք է կազմավորվեին հինգ ազգային կորպուսներ՝ հայկական, վրացական, ադրբեջանական (կոչվել է նաև իսլամական), ռուսական և լեհական²¹: Վերջին երկուսը գոյություն ունեին միայն թղթի վրա, և ձևավորման ամբողջ շրջանում այդ կորպուսներում այդպես էլ չստեղծվեց ոչ մի մարտունակ զորամաս, իսկ վրացական և ադրբեջանական կորպուսները համալրվեցին միայն 30 տոկոսով²²:

Հայկական բանակային կորպուս կազմավորելու մասին պաշտոնական թույլտվությունը Անդրկովկասում ստացվեց 1917 թ. նոյեմբերի 19-ին²³, Մրազրվում էր հայկական բրիգադի կազմի մեջ մտնող հրաձգային զնդերի թիվը հասցնել ութի, իսկ զնդերի կազմի գումարտակներինը՝ երեքի: Այդ զնդերից պետք է կազմակերպվեին երկու դիվիզիա՝ շորսական գունդ յուրաքանչյուրում: Հեծելազորային բրիգադի, 15 հրետանային մարտկոցների, ինչպես նաև օժանդակ տեխնիկական ծառայությունների հետ միասին այդ դիվիզիաները պետք է կազմեին հայկական կորպուսը²⁴: Կորպուսի զորամասերի և ստորաբաժանումների կազմավորումը անմիջապես ղեկավարում էր Հայոց ազգային խորհրդի կողմից ստեղծված այսպես կոչված զինվորական բաժինը (անվանվել է նաև զինվորական սեկցիա)²⁵: Գեներալ-մայոր Ք. Նազարբեկյանը՝ որպես հայկական կորպուսի հրամանատար, հրավիրվել էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կողմից: Միաժամանակ, քննարկվում էր նաև գեներալ-մայոր Մ Արեշյանի թեկնածությունը, որը Թիֆլիս էր հրավիրվել Արևմտյան ռազմաճակատից: Ի վերջո Զինվորական բաժնի և նրա այն ժամանակվա նախագահ Արսեն Շահմազյանի պնդմամբ հաստատվեց առաջինի թեկնածությունը²⁶: Կորպուսի հրամանատար նշանակվելուց հետո Ք. Նազարբեկյանը զբաղվեց Թիֆլիսում տեղակայված կորպուսի շտաբի կազմակերպմամբ²⁷: Նրա կարևոր հոգսերից մեկը պատրաստված սպայական կազմերի հավաքագրումն էր: Ինչպես իր հուշերում մատնանշում է գեներալ Ք. Նազարբեկյանը, «լավագույն սպաները, որոնց առաջարկություն էր արվում ծառայութան անցնել հայկական կորպուսում, հրաժարվում էին, իսկ ցանկություն հայտնողները, որպես կանոն, պահանջում էին բարձր պաշտոններ²⁸:

²¹ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 1:

²² Տե՛ս Ա. Հարությունյան, Պատմական ճշմարտությունը Սարդարապատի ճակատամարտի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1978, թիվ 3, էջ 97:

²³ Հայկական կորպուսի ստեղծման պաշտոնական հրահանգի ստացման վերաբերյալ, հայկական աղբյուրներում բերվում են տարբեր տվյալներ (հոկտեմբերի 14-ը, նոյեմբերի 21-ը և այլն): Մեր կողմից նշված ամսաթիվը բերված է ըստ Ք. Նազարբեկյանի հուշերի, որը մեր կարծիքով ամենահավաստիսն է: Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 15:

²⁴ Տե՛ս Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 58:

²⁵ Զինվորական բաժնի կազմը հետևյալն էր՝ Ս. Մամիկոնյան (նախագահ), Ռ. Տեր-Մինասյան (նախագահի տեղակալ), Հ. Բոյարյան (քարտուղար), Ա. Երզնկյան և ուրիշներ: Տե՛ս Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, Գահիրե, 1955, հ. Ա, էջ 200—201:

²⁶ Այդ մասին իր հուշերում անդրադարձել է Ք. Նազարբեկյանը, տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 15:

²⁷ Հայկական կորպուսի շտաբը իր կազմում ուներ հետևյալ վարչությունները՝ հրետանային, համբարակային (թիկունքի), ռազմական դատարանի, զինվորական դատախազության, զինվորական վերահսկման, բժշկա-սանհիտարական և բժշկա-անասնաբուժական: Շտաբի կազմի մեջ էր մտնում նաև շտաբի պահապան հարյուրյակը և մեկ հրետանային մարտկոց: Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 145:

²⁸ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 20, թ. 42:

Նշանակումներից առաջ բոլոր սպաների թեկնածությունները քննարկվում էին գլխավորական բաժնում: Կորպուսի բարձրագույն հրամանատարական կազմի ընտրությունն նպատակով զինվորական բաժնի անդամներից ստեղծվում է հանձնաժողով, որի մեջ էին մտնում Դրոն և Նազարբեկյանը²⁹: Կորպուսի շտաբի պետ նշանակվեց գնդ. Սկյարլեիչը, իսկ կորպուսի կոմիսար՝ Դրոն, արին հատուկ դրա համար Թիֆլիս էր հրավիրել Հայոց ազգային խորհուրդը: Կազմավորվող հայկական առաջին հրաձգային դիվիզիայի, որի կազմի մեջ էին մտնում 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հրաձգային գնդերը, հրամանատար նըշանակվեց Մ. Արեշյանը, իսկ շտաբի պետ՝ գնդ. Աթայանը: Հայկական երկրորդ հրաձգային դիվիզիայի հրամանատար նշանակվեց գեներալ Մ. Սիսիկյանը: Այդ դիվիզիայի կազմի մեջ էին մտնում 5-րդ- 6-րդ, 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերը: Երկու հեծելազորային գնդից կազմված բրիգադի հրամանատարի պաշտոնին նշանակվեց դնդ. Ն. Ղորղանյանը: Կազմավորվեց նաև 4րետանային բրիգադ, որը կազմված էր մեկ հրետանային գնդից: Այդ բրիգադի հրամանատար նշանակվեց գնդ. Ղամազյանը³⁰:

Կորպուսի շտաբի ստեղծման և բարձրագույն հրամանատարական կազմի նշանակման հետ միաժամանակ տեղի էին ունենում հայկական կորպուսի ստորաբաժանումների համալրումը և կազմավորումը: Ինչպես Պետրոգրադից, նույնպես և Թիֆլիսից բազմաթիվ հեռագրեր էին հաղորդվում համապատասխան զորամասեր և ռազմաճակատներ, պահանջելով հայ սպաներին և զինվորներին գործուղել հայկական կորպուսի արամադրության տակ³¹: Պետք է նշել, որ այդ կարգադրությունները հիմնականում կատարվում էին. հայ զինվորականները ցանկություն էին հայտնում ծառայելու հայկական կորպուսում:

Կորպուսի համալրման ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեցին: Այսպես, 1917 թ. նոյեմբերի 25-ին կովկասյան ռազմաճակատի շտաբը ռազմական օկրուգի շտաբին ուղարկած մի գրությամբ խնդրում էր, որպեսզի վերջինս կարգադրություն անի շտապ կերպով ուղարկել 4200 զինվոր՝ համալրելու նոր ստեղծված հայկական հրաձգային գնդերի երեք զումարտակները, այդ թվում՝ հայկական 5-րդ գնդի համար՝ 1200 մարդ և 1-ին ու 2-րդ գնդերի համար՝ 1500-ական մարդ³²: Դեկտեմբերի 18-ին կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Պրժևալսկին համապատասխան կարգադրություն արեց, որպեսզի ռազմաճակատը լքող ռուսական կորպուսներից առանձնացվեն հայ զինվորականները՝ իրենց զենքով ու զինամթերքով, և նրանցից կազմավորվեն հայկական զորամիավորումներ՝ ըստ նրանցում եղած Վայ զինվորների քանակության³³:

Նույն ամսին Թիֆլիսի հայկական ռազմական խորհուրդը դիմեց կովկասյան ճակատի օկրուգի շտաբի պետին, խնդրելով ըստ հնարավորի տեղյակ պահել, թե որտեղից և ինչ համալրում է սպասվում, հատկապես արևմտյան ռազմաճակատներից, Սիբիրից և Թուրքեստանից³⁴:

Կորպուսի զորամասերի կազմավորմանը իր ակտիվ մասնակցությունը բերեց նաև Երևանի ազգային խորհուրդը, որի գործունեությունը հատկապես աշխուժացավ և նպատակասլաց դարձավ այն բանից հետո, երբ 1917 թ. դեկտեմբերին այն գլխավորեց Արամ Մանուկյանը: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. մայիս Երև-

²⁹ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 19:

³⁰ Տե՛ս Առյւն տեղը:

³¹ Տե՛ս Ա. Հարությունյան, Աշխ., էջ 74:

³² Տե՛ս Առյւն տեղը, էջ 75:

³³ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 24:

³⁴ Տե՛ս Ա. Հարությունյան, Աշխ., էջ 75:

վանի ազգային խորհրդի գործադիր մարմինը՝ Հատուկ կոմիտեն, ընդունել է մի շարք որոշումներ, որոնք նախատեսում էին՝ դրամական հատկացումներ կազմավորվող հայկական ղեղերի համար³⁵, նրանց ռազմաճակատ մեկնելու կազմակերպում³⁶, ինչպես նաև բնակչության մոբիլիզացիա³⁷:

1917 թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրահանգ հրապարակեց զորահավաքից ազատվողների մասին, ուր նշված են այն առավել կարևոր բնագավառները, որտեղ զորակոչվողների աշխատանքն ուներ կարևոր պաշտպանական նշանակություն (երկաթուղայիններ, դեղագործներ և այլն)³⁸, Դեկտեմբերի 24-ին հրաման արձակվեց, որպեսզի Երևան քաղաքից շրացակային զորահավաքի ենթակա 20-ից 32 տարեկան քաղաքացիները, մինչև նոր կարգադրություններ ստանալը³⁹: Հայկական զորամասերում ծառայության մեկնող կամավորների տարիքը սահմանվեց 18 տարեկանից բարձր⁴⁰, Երևանի ազգային խորհուրդը իր վրա վերցրեց նաև հայկական կորպուս զորակոչվածների ընտանիքների ապահովման գործը: Զինվորական ծառայությունից վերադարձողներին իրավունք էր վերապահվում գրավելու նախկինում իրենց զբաղեցրած պաշտոնները⁴¹:

Գեներալ Թ. Նազարբեկյանի տվյալներով, թուրքական արշավանքի նախօրյակին, 1918 թ. հունվարի դրությամբ, հայկական կորպուսն արդեն ուներ ութ հրաձգային գունդ⁴², որից յուրաքանչյուրը կազմված էր երկու գումարտակից (երրորդ գումարտակները գտնվում էին կազմավորման փուլում), ութ լեռնային և դաշտային, մեկ հաուրիցային հրետանային մարտկոցներից, երկու տեղական (Ղոռվա և Ղազախի) և պահեստային երկու գնդերից, սակավորների մեկ գումարտակից, երկու հեծելազորային գնդերից, ինչպես նաև Անդրանիկի զորամասից⁴³, ճակատի առաջավոր գծերում գործող կամավորական խմբերից, որոնք տեղաբաշխված էին Վանում, Խնուսում և Խլաթում⁴⁴:

Հայկական կորպուսի կառուցվածքի մասին կարելի է պատկերացում կազմել ըստ հետևյալ սխեմայի⁴⁵:

Այսպիսով, փաստորեն 1918 թ. հունվարի սկզբին հայկական կորպուսի զորամասերը հիմնականում կազմավորվել էին և ընդունել վերոհիշյալ կորպուսային կառուցվածքը:

³⁵ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 227, 245, 89:

³⁶ Տե՛ս Աույն տեղը, թ. 103, 34:

³⁷ Տե՛ս Աույն տեղը, թ. 40, 136, 48, 137, 135, 53, Ասև ֆ. 290, ց. 1, գ. 1, թ. 7:

³⁸ Տե՛ս Աույն տեղը, թ. 41:

³⁹ Տե՛ս Աույն տեղը, թ. 44:

⁴⁰ Տե՛ս Աույն տեղը, թ. 34:


⁴¹ Տե՛ս Աույն տեղը, թ. 42:

⁴² Սկզբնական շրջանում կորպուսի հրաձգային գնդերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ. 1-ին գունդը տեղակայված էր Քանաքեռում (հրամանատար գնդ. Կարաքեշիշև), 2-րդը՝ Խնուսում (հրամանատար գնդ. Սամարյն), 3-րդը՝ Դիլիջանում (հրամանատար գնդ. Լ. Հովսեփյանց), 4-րդը՝ Էջմիածնում (հրամանատար Ա. Հովսեփյանց), 5-րդը՝ Վանում (հրամանատար գնդ. Պ. Փիրումյան), 6-րդը՝ Երևանում (հրամանատար գնդ. Մելիք-Մուրադյան), 7-րդը՝ Սարիղամիշում (հրամանատար Բեյ-Մամիկոնյան), 8-րդը՝ Ալեքսանդրապոլում (հրամանատար Արդուխյան): Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 15, 19:

⁴³ Անդրանիկի զորամասը, որը անվանվում էր Ասև Հատուկ հայկական դիվիզիա, կազմավորվել էր անմիջապես Արևմտահայ ապահովության խորհրդի նախաձեռնությամբ: Այն կազմավորվում էր բացառապես արևմտահայերից և կազմակերպական տեսակետից չունեք ընդունված բանակային կառուցվածք: 1918 թ. սկզբին Անդրանիկի դիվիզիայի կազմի մեջ էին մտնում հրաձգային մեկ գունդ և հետևակային ու հեծյալ մի քանի ջոկատ (խումբ): Տե՛ս Ա. Աֆանասյան, Աշխ., էջ 17—18:

⁴⁴ Տե՛ս Աույն տեղը, էջ 33:

⁴⁵ Կազմված է ըստ Թ. Նազարբեկյանի հուշերի: Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 16, թ. 33, Ասև՝ Н. Х. Баграмян, Мои воспоминания, Ереван, 1974, էջ 47:



Արդեն հիշատակված զորամիավորումներից բացի, քիչ ուշ սկսվեց նաև Ղարաբաղյան հատուկ ջոկատի կազմավորումը (հրամանատար՝ փոխգնդ. Մելիք Շահնազարյան)։

1918 թ. փետրվարին գեներալ Մ. Սիլիկյանի հրամանատարութեան տակ գտնվող, այսպես կոչված, Երևանյան զորախմբի կազմում կազմավորվեց Պարտիզանական կոշիկ գունդը (հրամանատար՝ գնդ. Պերեկրոստով), իսկ փետրվարի վերջին կազմավորվեցին նաև սահմանապահ զուամրտակը (հրամանատար՝ փոխգնդ. Սիլին) և հեծելազորային ջոկատը (հրամանատար՝ գնդ. Կորոլկով)⁴⁶։

1918 թ. սկզբի տվյալներով, հայկական բանակային կորպուսը ուներ 36 գումարտակ, 12 էսկադրոն, 3 հարյուրյակ, 36 (26 լեռնային, 10 թեթև) թընդանոթ, որոնցում ծառայում էր 16.715 սվին ու թուր և 606 սպա⁴⁷։

Սակայն պետք է նշել, որ կորպուսի թվաքանակը խիստ անկայուն էր և մշտապես փոփոխվում էր։ Դա պայմանավորված էր նրանով, որ հայկական կորպուսը ստիպված էր, դեռ չավարտած իր կազմավորումը, մտնել մարտական գործողությունների մեջ, որը և պատճառ էր դառնում մեծ կորուստների։ Թվաքանակի անկայունությունը նպաստող մյուս կարևոր հանդամանքը Հայկական կորպուսի շարքերում տեղ գտած դասալքությունն էր։ 1918 թ. մարտի 3-ին գեներալ Ք. Նազարբեկյանը Քիֆիսիո կորպուսի շտաբը Ալեքսանդրապոլ փոխադրելուց անմիջապես հետո Քիֆիսի Հայոց ազգային խորհրդին ուղղված իր ղեկուցագրերից մեկում, որն արվել է կորպուսի զորամասերի իրական վիճակին անմիջականորեն ծանոթացնելու նպատակով, տեղեկացնում է, որ Հայկական կորպուսի գնդերը, որոնցից յուրաքանչյուրի թվակազմը սկզբում հասցվել էր 1500 սվինի, գինվորների դասալքության հետևանքով խիստ նոսրացել են։ Դրա հետևանքով, հայտնում է գեներալը, ներկայումս հայկական առաջին դիվիզիայում մնացել է 1500, իսկ երկրորդում՝ ընդամենը 2500 սվին⁴⁸։

1918 թ. փետրվարի սկզբին թուրքերը խախտեցին 1917 թ. դեկտեմբերի 5 (18)-ին Երզնկայում կնքված դինադադարը և անցան հարձակման։ Հայկական կորպուսի վրա ընկավ 1918 թ. Անդրկովկասի վրա կատարված թուրքական արշավանքին դիմակայելու ողջ ծանրությունը։ Մարտական գործողությունների ժամանակ հայկական կորպուսն ունեցավ մեծ կորուստներ։ 1918 թ. մայիսյան հերոսամարտերից հետո (Սարդարապատ, Բաշ Ապարան և Ղարաբաղի սա) կորպուսն, անցավ նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետության տրամադրության տակ՝ դառնալով Հայկական զինված ուժերի հիմքը⁴⁹։

1918 թ. հուլիսի 20-ի դրությամբ Հայկական կորպուսի շարքերում մնացել էին 60 առանձին զորամասեր և ստորաբաժանումներ⁵⁰։ Սակայն ըստ ՀՀ առաջին զինվորական նախարար գեներալ Հ. Հախվերդյանի, նույն ժամանակահատվածում կորպուսի առանձին ստորաբաժանումների թվաքանակը չէր անցում 40-ից, որից յուրաքանչյուրի անձնակազմում մնացել էր ընդամենը 100—200 մարդ⁵¹։

Այսպես, 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին Քիֆիսի և Երևանի Հայոց

⁴⁶ Տե՛ս գեներալ Մ. Սիլիկյանի հուշագրերը, ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 18, թ. 6։

⁴⁷ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 88, թ. 1։

⁴⁸ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 9—11։

⁴⁹ Տե՛ս Մ. Լ. Կարապետյան, Հայաստանի առաջին Հանրապետության զինված ուժերի ստեղծման պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, թիվ 2, էջ 2։

⁵⁰ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 1—5։

⁵¹ Տե՛ս ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 82, թ. 2։

ազգային խորհուրդների համատեղ ջանքերի շնորհիվ ձևավորվեց հայկական բանակային կորպուսը: Նրա հիմքը կազմեցին ուսական զորքերում ծառայող հազարավոր հայ զինվորները և կադրայի՝ սպաները: Այդ ուժերին հայկական բանակային կորպուսի զորամիավորումներում համախմբելու անհրաժեշտությունը առաջացավ Կովկասյան ճակատի ուսական բանակի զորքերի հեռացումից հետո, որը հատկապես մեծ ծավալ ընդունեց բոլշևիկյան հոկտեմբերյան հեղաշրջումից հետո⁵²:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում ձեռք բերված հաղթանակները Հայկական կորպուսի զորամասերի հերոսական ջանքերի արդյունքն էին և ունեցան հիրավի պատմական նշանակություն: Այդ հերոսամարտերի շնորհիվ արևելահայությունը ոչ միայն փրկվեց ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից, այլև թուրքերը ստիպված եղան հաշվի նստել պետականություն ստեղծելու հայ ժողովրդի կամքի հետ:

М. Л. КАРАПЕТЯН — Из истории создания армянского национально-армейского корпуса. — Распад русской армии в конце 1917—начале 1918 гг. создал благоприятные условия для турецкой интервенции в Закавказье. Пытаясь найти новые силы, способные заменить покидающих фронт русских воинов, командование русской армии стало поощрять формирование национальных воинских формирований. В статье на основе материалов, содержащихся в литературе и периодической печати, а также архивных документов, значительная часть которых вводится в научный оборот впервые, освещается та титаническая работа, которую развернул Тифлисский армянский национальный совет и действующий при нем военный орган для создания армянского армейского корпуса. В деле формирования и комплектования армянского корпуса значительную роль сыграл также Ереванский национальный совет во главе с Арамом Манукианом. После восстановления армянской государственности в мае 1918 г. части армянского корпуса перешли в распоряжение правительства Республики Армения и составили основу ее вооруженных сил.

⁵² Եվրոպական ճակատներից դեպի Կովկաս հայ զինվորականներին տեղափոխելու մասին բանակցությունները հայ քաղաքական շրջանների կողմից շարունակվեցին ման հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, մասնավորապես Խորհրդային Ռուսաստանի ռազմական գործերի ժողկոմ Լ. Դ. Տրոցկու հետ:

Հետաքրքրական է, որ այդ բանակցությունների ժամանակ հայկական կողմը, որ ներկայացնում էր Լ. Նազարյանցը (Լեոնյան). Լ. Դ. Տրոցկուն առաջարկեց Չեխոսլովակյան կորպուսի (45 հազար մարդ) կովկասյան ռազմաճակատ տեղափոխելու տարբերակը: Լ. Դ. Տրոցկին այդ խնդրանքին սովեց իր սկզբունքային համաձայնությունը, սակայն գերմանացիների հետ բանակցությունների (Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքման կապակցությամբ)՝ Լ. Նազարյանցի մեկնելու հսկումանքով բանակցությունները ընդհատվեցին, իսկ Լ. Նազարյանցի վերադարձին այդ կորպուսը արդեն հեռացել էր Պոլոդե: Տե՛ս Գ. Լազյան, Դեմքեր հայ ազատագրական շարժումէն, Գաիթե, 1949, էջ 328: